

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆԻ  
ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ  
(իրավական իրազեկում)

Հրապարակվում է ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում:

ԵՐԵՎԱՆ 2024



## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

1. Փախստականի կարգավիճակը Եվրոպական Միություն մուտքի համար «կանաչ լույս չէ» .....	2
2. Փախստականի և ժամանակավոր պաշտպանության տակ առնված անձանց իրավական կարգավիճակները .....	9
2.1. Կարգավիճակների հիմնական տարբերությունները .....	9
2.2. Կարգավիճակների իրավական հիմքերը .....	10
3. Արդյո՞ք մի երկրում փախստականի կարգավիճակ ստանալն ինքնաշխատ կերպով երաշխավորում է որևէ այլ երկրում փախստականի կարգավիճակ կամ ապաստան ստանալու իրավունքը .....	17



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ՝ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

(իրավական իրազեկում)

## 1. Փախստականի կարգավիճակը Եվրոպական Միություն մուտքի համար «կանաչ լույս չէ»

Եվրոպական միության քաղաքացի չհանդիսացող ֆիզիկական անձանց «մուտքը» Եվրոպական միության տարածք տեղի է ունենում մուտքի արտոնագրի՝ վիզայի միջոցով: Վիզան տրամադրվում է համապատասխան անդամ-պետության հյուպատոսարանի կողմից՝ անձի դիմումի և համապատասխան փաստաթղթերի հիման վրա:

Հյուպատոսարանը յուրաքանչյուր դեպքում վիզա տրամադրելու հարցը քննելիս հաշվի է առնում Եվրոպական միության իրավունքով և առանձին անդամ-պետության ներքին օրենսդրությամբ սահմանված չափանիշների պահպանվածությունը, այդ թվում նաև՝ հաշվի առնելով անձի անձնական, սոցիալական կարգավիճակներին առնչվող որոշ առանձնահատկությունները:

---

<sup>1</sup> Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետության կողմից ժամանակավոր պաշտպանության տակ առնված անձանց շրջանակներում տարածված է այն թյուր կարծիքը, որ Հայաստանի Հանրապետությունում նրանց ունեցած իրավական կարգավիճակի ուժով նրանք համանման կարգավիճակ կարող են ակնկալել նաև արտասահմանյան երկրներում, ի մասնավորի՝ Եվրոպական միության անդամ երկրներում, սույն իրավական իրազեկման շրջանակներում հարցը կքննարկվի առավելապես, բայց ոչ բացառապես, ԵՄ և դրա անդամ պետությունների օրենսդրության լույսի ներքո:



Այնուամենայնիվ, նշված հանգամանքներից և ոչ մեկը չի կարող ipso facto վիզայի տրամադրման մերժման հիմք հանդիսանալ. փոխարենը վիզայի տրամադրումը կարող է մերժվել, եթե առկա է անդամ-պետությունների, ինչպես նաև Եվրոպական միության սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական շահերին, այդ թվում նաև՝ հասարակական կարգին և ազգային անվտանգությանը սպառնացող որևէ հանգամանք, ինչպիսին կարող է հանդիսանալ ապօրինի միգրացիան, ահաբեկչությունը և այլն՝ անկախ անձի իրավական կարգավիճակից:

Սակայն, անձի իրավական կարգավիճակը, տվյալ պարագայում՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց շնորհված փախստականի կարգավիճակը, որպես այդպիսին, որևէ որոշիչ նշանակություն չի կարող ունենալ վիզայի տրամադրման կամ մերժման գործում:

Այլ կերպ՝ իրավիճակը, երբ անձին վիզա չի տրամադրվում՝ հիմք ընդունելով վերջինիս իրավական կարգավիճակը (ՀՀ քաղաքացի, փախստական, օտարերկրյա քաղաքացի և այլն), որպես կանոն, բացառվում է:

Մինևույն ժամանակ, անձի իրավական կարգավիճակը, ինչպիսին էլ որ այն լինի, վիզայի տրամադրման համար միանգամայն բարելավող նախապայման չի հանդիսանում. վիզայի տրամադրումը կամ դրա մերժումը չի պայմանավորվում անձի իրավական կարգավիճակի տեսակից:

Անձին ԵՄ անդամ երկիր մուտքի արտոնագրի տրամադրման հարցը լուծվում է՝ ըստ առկա իրավական կարգավորումների՝ հաշվի առնելով անձի սոցիալ-տնտեսական կարգավիճակը,

## **ուղևորության նպատակին առնչվող հարցերը, ինչպես նաև այլ անձնական հանգամանքներ:**

Վիզաների տրամադրման հարաբերությունները կարգավորվում են Եվրոպական միության ներքին օրենսդրական ակտերով, մասնավորապես՝ Վիզայի օրենսգիրքը (Visa Code) սահմանող №810/2009 Ռեգլամենտով և Սահմանների մասին 2006թ. Շենգենյան օրենսգրքով, ինչպես նաև առանձին անդամ-պետությունների ներքին օրենսդրությամբ:

Համաձայն նշված ԵՄ Վիզայի օրենսգրքի 2-րդ հոդվածի՝

**«Վիզան»** Եվրոպական միության անդամ պետությունների կողմից շնորհված թույլտվություն է՝

ա) անդամ պետությունների տարածքում 180 օրվա ընթացքում առավելագույնը ցանկացած 90 օրերի ընթացքում մնալու կամ

բ) անդամ պետությունների օդանավակայանների միջազգային տրանզիտային գոտիներով անցնելու համար:

**«Օդանավակայանային տրանզիտի վիզան»** գործում է անդամ պետությունների մեկ կամ մի քանի օդանավակայանների միջազգային տրանզիտային գոտիներով անցնելու համար:

**«Միասնական վիզան»** այն մուտքի արտոնագիրն է, որը գործում է անդամ պետությունների ողջ տարածքում:

**«Սահմանափակ տարածքային գործողությամբ վիզան»** այն մուտքի արտոնագիրն է, որը գործում է մեկ կամ մի քանի, բայց ոչ բոլոր անդամ պետությունների տարածքում:

ԵՄ Վիզայի օրենսգրքի 10-րդ հոդվածը սահմանում է մի շարք պահանջներ, որոնք հայտատուն



պետք է իրականացնի ԵՄ անդամ երկիր վիզա (մուտքի արտոնագիր) ստանալու համար, մասնավորապես՝ ներկայացնի դիմում (տե՛ս հոդված 11), ճամփորդական փաստաթուղթ (տե՛ս հոդված 12), լուսանկար, թույլատրի, անհրաժեշտության դեպքում, վերցնել իր մատնահետքերը (տե՛ս հոդված 13), վճարի վիզայի վճարը (տե՛ս հոդված 16), ներկայացնի օժանդակ փաստաթղթեր (համաձայն Օրենսգրքի 14-րդ հոդվածի և II հավելվածի) և այլն: ԵՄ անդամ երկիր մուտքի վիզա ստանալու համար կարևոր է, որ անձն ունենա ուժի մեջ գտնվող ճամփորդական փաստաթուղթ, որը, համապատասխանի նույն օրենսգրքի 12-րդ հոդվածով սահմանված մի շարք չափանիշներին:

Վիզայի օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ միասնական վիզա հայցող անձը ներկայացնում է. ա. ուղևորության նպատակը նշող փաստաթղթեր. բ. տեղաբաշխման հետ կապված փաստաթղթեր կամ բավարար միջոցների առկայության ապացույցներ՝ տեղաբաշխման ծախսերը հոգալու համար.

գ. փաստաթղթեր, որոնք կապացուցեն, որ հայտատուն տիրապետում է բավարար միջոցների՝ իր ուղևորության ենթադրվող ժամանակահատվածի ընթացքում գոյատևման համար, ինչպես նաև իր երկիր վերադարձի կամ այլ՝ երրորդ երկիր, տրանզիտի համար, որտեղ իր մուտքը երաշխավորված է, կամ այնպիսի փաստաթղթեր, որոնք ցույց կտան, որ անձն ի վիճակի է օրինական ճանապարհով ձեռք բերել այդ միջոցները: Այս մասով անդամ պետություններն իրավագոր են ներկայացնել հավելյալ պահանջներ նույնպես.



դ. տեղեկատվություն, որը թույլ կտա գնահատել անձի՝ անդամ-պետության տարածքը լքելու մտադրությունը՝ մինչ հայցվող վիզայի ժամկետի ավարտը:

ԵՄ Վիզայի օրենսգրքով հստակ սահմանվում են նաև վիզայի մերժման հիմքերը, որոնք կապված չեն անձի իրավական կարգավիճակի հետ և, մասնավորապես՝ երրորդ երկրի քաղաքացի լինելու, փախստական լինելու և այլնի հետ:

Մասնավորապես՝ Վիզայի օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն՝ վիզայի (մուտքի արտոնագրի) տրամադրումը **մերժվում է՝**  
**ա) եթե հայտատուն.**

- ներկայացնում է կեղծ, կեղծված կամ աղավաղված ճամփորդական փաստաթուղթ.

- չի տրամադրում ապացույցներ՝ անդամ-պետությունում գտնվելու նպատակի և պայմանների մասին (այս պայմանը նախատեսված է ապօրինի միգրացիան կանխելու նպատակով).

- չի տրամադրում օդանավակայանով նախատեսված տարանցման նպատակի և պայմանների հաստատում.

- չի տրամադրում ապացույցներ այն մասին, որ նա ունի բավարար ապրուստի միջոցներ, ինչպես



տվյալ անդամ-պետությունում նախատեսված ժամանակահատվածում գտնվելու համար, այնպես էլ իր ծագման կամ բնակության երկիր վերադառնալու կամ երրորդ երկիր տարանցման համար, որտեղ նրան երաշխավորված է «մուտքը», կամ ի վիճակի չէ օրինական ճանապարհով ձեռք բերել նման միջոցներ.

- արդեն մնացել է անդամ պետությունների տարածքում՝ միասնական վիզայի կամ սահմանափակ տարածքային գործողությամբ վիզայի հիման վրա, 90 օր ընթացիկ՝ 180 օրվա ընթացքում.

- անձին չընդունելու նպատակով առկա է մուտքի արգելքի մասին տեղեկատվական հարցում՝ Շենգենյան տեղեկատվական համակարգի շրջանակներում.

- համարվում է, որ վտանգ է ներկայացնում հասարակական կարգի, ներքին անվտանգության կամ հանրային առողջության համար՝ Շենգենյան սահմանային օրենսգրքի 2-րդ հոդվածի 19-րդ կետի իմաստով, կամ որևէ անդամ պետության միջազգային հարաբերությունների համար, և, մասնավորապես, նույն պատճառներով առկա է մուտքի արգելքի մասին տեղեկատվական հարցում՝ Շենգենյան տեղեկատվական համակարգի շրջանակներում.

- անհրաժեշտության դեպքում չի տրամադրում համապատասխան և վավեր ճանապարհորդական առողջության ապահովագրություն ունենալու ապացույց,

կամ

բ) եթե կան հիմնավոր կասկածներ՝ հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի իսկության կամ դրանց բովանդակության հավաստիության,

հայտատուի կողմից արված հայտարարությունների կամ անդամ պետությունների տարածքը մինչ վիզայի ժամկետի ավարտը լքելու մտադրության հավաստիության մասին:

Այսպիսով, եթե անձը չի ներկայացնում պահանջվող փաստաթղթերը և/կամ չի համապատասխանում վերոբերյալ պայմաններից առնվազն մեկին, պապ նրան վիզա տրամադրվել չի կարող:

Բացառության կարգով որոշ պետություններ կարող են տրամադրել սահմանափակ տարածքային գործողությամբ վիզա, որի պարագայում Շենգենյան տարածքում ազատ տեղաշարժվելու իրավունք չի տրամադրվում:

Ուստի՝ փախստականների, և տվյալ պարագայում՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանության տակ առնված ու փախստականի կարգավիճակ ստացած անձանց համար, Եվրոպական միության մուտքի արտոնագիր տրամադրելու հատուկ, այդ թվում՝ պարզեցված կամ բարդացված ընթացակարգեր նախատեսված չեն: Հետևաբար՝ փախստականի կարգավիճակը վիզայի տրամադրման հարցում որևէ բարելավող կամ վատթարացնող հանգամանք չի կարող հանդիսանալ:

Սակայն, անկախ այլ հանգամանքներից՝ հարկ է նկատի ունենալ, որ Եվրոպական միության իրավական մոտեցումներին զուգահեռ՝ յուրաքանչյուր անդամ-պետություն, ելնելով իր սահմանադրական կարգի առանձնահատկություններից, յուրովի է մշակում և իրականացնում իր միգրացիոն քաղաքականությունը՝ հաշվի առնելով տնտեսաքա-



դաքական, սոցիալական, մշակութային և բազմաթիվ այլ գործոններ:

Հետևաբար՝ անգամ Եվրոպական միության օրենսդրության առկայության պարագայում վիզայի տրամադրման չափանիշներն ամբողջությամբ նույնական չեն:

Անկախ մոտեցումների տարբերակվածությունից՝ միանշանակ է, որ փախստականի վկայականի առկայությունը որևէ կերպ ինքնին չի կարող խոչընդոտել և կամ բարելավել մուտքի արտոնագիր հայցող անձի կարգավիճակը

## 2. Փախստականի և ժամանակավոր պաշտպանության տակ առնված անձանց իրավական կարգավիճակները

### 2.1. Կարգավիճակների հիմնական տարբերությունները

Նախևառաջ, հարկ է նկատել, որ «փախստական» և «ժամանակավոր պաշտպանության տակ առնված անձ» հասկացություններն ունեն տարբեր իրավական բովանդակություն:

Հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ **փախստականի** կարգավիճակը միջազգային կոնվենցիաներով երաշխավորված և յուրաքանչյուր կոնկրետ երկրում սահմանված ընթացակարգերի արդյունքում **անհատական** իրավական ակտով տրամադրվող, **որպես կանոն, անժամկետ կարգավիճակ** է: Ի տարբերություն վերջինիս՝ **Ժամանակավոր պաշտպանության տակ գտնվող անձի** կարգավիճակը տրվում է անձանց մասսայական ներհոսքի դեպքում՝ **կոլեկտիվ** կարգով, և չի ենթադրում անհատական ակտի կայացում: Ժամանակավոր պաշտպանության տակ առնված անձի կարգավիճակը, որպես կանոն, **ունի խիստ ժամկետային սահմանափակում**:

## 2.2. Կարգավիճակների իրավական հիմքերը

**2.2.1.** Միջազգային իրավունքում փախստականի իրավական կարգավիճակը կարգավորվում է **ՄՄԿ-ի՝ «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) և 1967թ. Արձանագրությամբ**: Նշված միջազգային-իրավական ակտերով սահմանվում են փախստականի իրավական կարգավիճակի բնորոշումը, փախստականների հիմնական իրավունքներն ու պարտականություններ, ինչպես նաև տրամադրվող պաշտպանության նվազագույն չափանիշները:

Սույն ակտերի հիման վրա պետություններն իրենց ներպետական օրենսդրության շրջանակներում մշակում և ներդնում են համապատասխան նյութաիրավական և կառուցակարգային երաշխիքներ՝ Կոնվենցիայում հաստատագրված սկզբունքներ

րի, նպատակների և արժեքների կենսագործման համար:

Կարևոր է նկատի ունենալ, որ միջազգային-իրավական ակտերով սահմանվում են փախստականի իրավունքների պաշտպանության լուրջ նվազագույն երաշխիքներն ու անդամ-պետությունների կողմից ճանաչված փախստականի իրավական կարգավիճակի ընդհանուր չափանիշները: Պետությունները, պարտավորված լինելով կատարել Կոնվենցիայի շրջանակներում իրենց կողմից ստանձնած պարտականությունները, այնուամենայնիվ, սահմանափակված չեն Կոնվենցիայի իրավակարգավորումների շրջանակներով, և փախստականներին կարող են տրամադրել ավելի բարձր իրավական պաշտպանություն, քան նախատեսված է Կոնվենցիայով:

Եվ քանի որ անձին փախստականի կարգավիճակի շնորհումը գտնվում է պետության իրավասության տիրույթում (բացառությամբ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի մանդատով ճանաչված փախստականների), ապա ներպետական օրենսդրությամբ պետությունները կարող են սահմանել հավելյալ երաշխիքներ և արտոնություններ, քան առկա են Կոնվենցիայում:

Միննույն ժամանակ, կախված առանձին պետություններից և նրանց ազգային օրենսդրություններից՝ փախստականի կարգավիճակի շնորհման առանձին հիմքերը, կարգն ու այդ կարգավիճակով պայմանավորված պաշտպանության ծավալը, կարող են տարբերվել:

Հիշյալ միջազգային իրավական ակտերով և «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի իմաստով **փախստական է համարվում՝**

- այն օտարերկրյա քաղաքացին, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից,

կամ

- նա, ով, չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ.
- այն օտարերկրյա քաղաքացին, որը ստիպված է լքել իր քաղաքացիության երկիրը, իսկ քաղաքացիություն չունեցող անձը՝ իր նախկին մշտական բնակության երկիրը՝ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով:

**2.2.2.** Ինչ վերաբերում է ժամանակավոր պաշտպանության տակ առնված անձանց իրավական կարգավիճակին, ապա այս պարագայում յուրաքանչյուր երկիր, ելնելով միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներից և իր ներպետական օրենսդրական կարգավորումներից, սահմանում է այս անձանց իրավական կարգավիճակի տրամադրման կարգը և բովանդակությունը:

Եթե, որպես օրինակ, դիտարկենք ԵՄ անդամ պետությունները, ապա հարկ է նկատել, որ ԵՄ անդամ պետությունների շրջանակներում 2001 թվականի հուլիսի 20-ին ընդունվել է Տեղահանված անձանց մասսայական ներգաղթի դեպքում նրանց ժամանակավոր պաշտպանության տրամադրման մինիմալ պայմանների և այդ անձանց ընդունման հետևանքների առնչությամբ անդամ պետությունների ջանքերի և պատասխանատվության միջոցների հավասարակշռման մասին թիվ 2001/55/EU դիրեկտիվը, որի բովանդակությունից նույնպես կարելի է ենթադրել, որ նման կարգավիճակի տրամադրումը և կարգավիճակի բովանդակությունն ուղղակիորեն կախված է կոնկրետ անդամ երկրի ներքին քաղաքականությունից:

Համաձայն վկայակոչված ‘Գիրեկտիվի՝ «ժամանակավոր պաշտպանության» տրամադրումը բացառիկ բնույթի ընթացակարգ է, որն ուղղված է երրորդ երկրներից ժամանած այն անձանց, որոնք չեն կարող վերադառնալ իրենց ծագման երկիր, մասսայական ներհոսքի դեպքում նրանց անհապաղ և ժամանակավոր պաշտպանության տրամադրմանը, երբ առկա է վտանգ, որ նման



ներհոսքի պայմաններում ապաստանի տրամադրման գործող համակարգերը չեն կարող գործարկվել՝ առանց այդ անձանց համար անբարենպաստ հետևանքներ առաջացնելու:

Հիշյալ Դիրեկտիվի բովանդակությունից նույնպես բխում է, որ ժամանակավոր պաշտպանության կարգավիճակը կարող է տրամադրվել **սահմանափակ ժամկետով** (նախաբան, 13-րդ կետ): Նման կարգավիճակի տրամադրումը չի կարող որևէ կերպ կանխորոշել 1951 թվականի Ժնևի կոնվենցիային և դրա՝ 1967 թվականի Արձանագրության համաձայն, անձին փախստականի կարգավիճակ շնորհելը (նախաբան, 10-րդ կետ), այլ կերպ՝ այս կարգավիճակը ոչ նպաստում և ոչ էլ խոչընդոտում է փախստականի կարգավիճակ հայցելու գործընթացին:

### ՀԻՇԵՑՈՒՄ

ԵՄ-ում գործող վերոթվարկյալ ընթացակարգերը որևէ կերպ կիրառելի չեն ԼՂ բռնի տեղահանված անձանց նկատմամբ, քանի որ ո՛չ ԵՄ և ո՛չ ԵՄ որևէ անդամ պետություն, նշված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ առնելու մասին որևէ որոշում չունի:



«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի համաձայն՝ օտարերկրյա քաղաքացի և քաղաքացիություն չունեցող անձանց այն խմբերի համար, որոնք ստիպված են լքել իր քաղաքացիության երկիրը, իսկ քաղաքացիություն չունեցող անձը՝ իր նախկին մշտական բնակության երկիրը՝ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների հետևանքով լքել են իրենց, համապատասխանաբար, քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության պետության տարածքները և հայտնվել են Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում, Կառավարությունը կարող է ընդունել այդ անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու մասին որոշում:

Հիշյալ իրավակարգավորման ուժով ՀՀ կառավարության՝ 2023թ. հոկտեմբերի 26-ի N 1864-Ն որոշմամբ ժամանակավոր պաշտպանության տակ են վերցվել.

1) Լեոնային Ղարաբաղի բնակչության ռեզիստրի հաշվառումներով անցնող անձինք,

2) ՀՀ տարածքում կամ ՀՀ-ից դուրս գտնվող այն անձինք, որոնց վերջին հաշվառման հասցեն եղել է Լեոնային Ղարաբաղում.

3) այն անձինք, որոնք չեն ունեցել հաշվառում Լեոնային Ղարաբաղի բնակչության ռեզիստրում, սակայն բնակվել են Լեոնային Ղարաբաղում և 2023

թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվելուց հետո հաշվառվել են ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից:

**Անհրաժեշտ է ընդգծել, որ հիշյալ օրենքի 62-րդ հոդվածի ուժով Հայաստանի Հանրապետության կողմից ժամանակավոր պաշտպանության տակ վերցված օտարերկրացիները (այսուհետ՝ ժամանակավոր պաշտպանված անձինք) ևս ճանաչվում են փախստական և ունեն փախստականների համար նշված օրենքով սահմանված միևնույն իրավունքներն ու պարտականությունները:**

Այս առնչությամբ հարկ է արձանագրել, որ փաստացի ՀՀ օրենսդրությամբ փախստականի և ժամանակավոր պաշտպանության տակ վերցված անձի կարգավիճակները մի կողմից՝ նույնացվել են, մյուս կողմից՝ ակնհայտ է, որ ելնելով այդ երկու իրավական կարգավիճակների բովանդակային ծավալների տարբերություններից, դրանց նույնացումը հետագայում կարող է այդ անձանց իրավական կարգավիճակների առումով իրավական որոշակիության խնդիրներ առաջացնել:

Մասնավորապես, հայտնի է, որ ժամանակավոր պաշտպանության կարգավիճակը ԼՂ բռնի տեղահանված անձանց տրամադրված է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը: Եվ իրավական տեսանկյունից արդարացված են այն բոլոր մտահոգությունները՝ կապված այն հանգամանքի հետ, թե արդյո՞ք նման կարգավիճակի

դադարեցման պարագայում կամ դրա ուժով կդադարեցվի նաև նրանց փախստականի կարգավիճակը ՀՀ տարածքում:

### **3. Արդյո՞ք մի երկրում փախստականի կարգավիճակ ստանալն ինքնաշխատ կերպով երաշխավորում է որևէ այլ երկրում փախստականի կարգավիճակ կամ ապաստան ստանալու իրավունքը**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ինչպես վերը նշվեց, չնայած համընդհանուր նվազագույն չափանիշների՝ յուրաքանչյուր երկիր իր ներքին օրենսդրության համաձայն և իր կողմից վարած քաղաքականությանն համապատասխան է որոշում իր ներգաղթի քաղաքականությունը, որևէ երկրում փախստականի կարգավիճակ ստանալու հանգամանքը չի կարող կանխորոշել անձի՝ որևէ այլ երկրում փախստականի կարգավիճակ կամ ապաստանի իրավունք ստանալը:

Ավելին, մի երկրում նման կարգավիճակ ունենալը կարող է մեկ այլ երկրում նման կարգավիճակի տրամադրման/**մերժման ուղղակի հիմք հանդիսանալ**:

Որպես օրինակ վերցնենք նախ՝ ՀՀ օրենսդրությունը, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ ապաստանի տրամադրումը կարող է մերժվել **այն փախստականին**, որը ժամանել է **երրորդ ապահով երկրից**, որտեղ նա **չունի հետապնդման, մարդու իրավունքների խախտումների կամ իր երկիր վերադարձվելու երկյուղ**, (...) կամ **չունի արտաքին**

հարձակման, համատարած բռնության, այլ երկրի տիրապետության տակ գտնվելու, ներքին հակամարտությունների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների (վտանգների) ենթարկվելու երկյուղ, (...) և կարող է օրինական կերպով վերադառնալ այդ երկիր:

Ռուսաստանի Դաշնության օրենսդրության՝ «Փախստականների մասին» դաշնային օրենքի 5-րդ հոդվածի համաձայն ևս՝ անձի՝ փախստականի կարգավիճակ ստանալու հայցի մերժման հիմք կարող են հանդիսանալ, ի թիվս այլնի, հետևյալ հանգամանքները.

- եթե անձն օժտված է երրորդ պետության տարածքում օրինական գտնվելու իրավունքով, այդ պետության կողմից հետապնդման զոհ դառնալու հիմնավորված երկյուղի բացակայության պայմաններում,
- եթե այն պետության տարածքում, որտեղից եկել է, օժտված է եղել փախստական ճանաչվելու հնարավորությամբ:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրությամբ ևս նախատեսված են նմանատիպ իրավակարգավորումներ, մասնավորապես՝ Հիմնական օրենքի 16(ա) հոդվածի համաձայն՝

(1) Քաղաքական հողի վրա հետապնդվող անձինք ունեն ապաստանի իրավունք:

(2) Սույն հոդվածի 1-ին կետը չի կարող վկայակոչվել այն անձի կողմից, ով մուտք է գործում դաշնային տարածք Եվրոպական համայնքների անդամ պետությունից կամ մեկ այլ երրորդ պետությունից, որտեղ կիրառվում է Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան և

**երաշխավորված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան:**

Համապատասխանաբար, Գերմանիայի Դաշնային Հանրապետության «Ապաստանի մասին» օրենքի 26(ա) հոդվածի համաձայն՝

(1) Ցանկացած օտարերկրացի, ով դաշնային տարածք է մուտք գործել երրորդ երկրից, Հիմնական օրենքի 16ա (2) հոդվածի առաջին նախադասության իմաստով (անվտանգ երրորդ երկիր), չի կարող վկայակոչել Հիմնական օրենքի 16ա(1) հոդվածը: Նրան ապաստան չի տրամադրվի:

Նույն օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝

(1) Այն օտարերկրացուն, ով այլ երրորդ երկրում արդեն իսկ ապահովագրված է քաղաքական հետապնդումներից, **չի կարող ապաստան տրամադրվել:**

(2) Եթե օտարերկրացուն երրորդ ապահով երկրի կողմից, կամ մեկ այլ երկրի կողմից Փախտականի կարգավիճակի մասին կոնվենցիայի համաձայն, տրամադրվել է ճամփորդական փաստաթուղթ, ապա ենթադրվում է, որ նա այդ երկրում ապահովագրված է քաղաքական հետապնդումներից:

(3) Եթե նախքան դաշնային տարածք մուտք գործելն օտարերկրացին **երեք ամսից ավել** ապրել է մեկ այլ՝ երրորդ, երկրում, որտեղ նրան քաղաքական հետապնդում չի սպառնացել, ապա ենթադրվում է, որ նա այդ երկրում ապահովագրված է քաղաքական հետապնդումներից: Նշվածը չի կիրառվում, եթե օտարերկրացին հավաստի ապացույցներ է ներկայացնում առ այն, որ իր արտաքսումը մեկ այլ երկիր, որտեղ իրեն



քաղաքական հետապնդում է սպառնում, ողջամիտ որոշակիությամբ չի կարող բացատվել:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք միանշանակ փաստել, որ այն թյուր կարծիքը, որ *Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանված՝ ՀՀ Կառավարության 1864-Ն որոշմամբ ժամանակավոր պաշտպանության տակ առնված և փախստական ճանաչված անձինք կարող են հավակնել որևէ արտասահմանյան երկրում և ի մասնավորի՝ ԵՄ անդամ երկրներում, ինքնաշխատ կերպով որևէ համանման (փախստականի, ժամանակավոր պաշտպանության տակ գտնվողի կամ ապաստան հայցողի) կարգավիճակի չունի որևէ իրավական հիմք*: Ավելին, որոշ առանձին դեպքերում, հաշվի առնելով, որ նշված խմբին պատկանող անձինք բնակություն են հաստատել Հայաստանի Հանրապետությունում, Հայաստանի Հանրապետության կողմից նրանց տրամադրվել է միջազգային իրավական չափանիշներին համապատասխան պաշտպանություն, նրանք չունեն միջազգային կոնվենցիաներով և ներպետական օրենսդրություններով նախանշված երկյուղները և սպառնալիքները, վերջին հանգամանքները կարող են ուղղակի իրավական հիմք ծառայել հայցվող պետությունների կողմից նրանց ապաստանի կամ փախստականի կարգավիճակի տրամադրման մերժման համար:

Որևէ երկրում փախստականի  
կարգավիճակ ստանալու  
հանգամանքը չի կարող  
կանխորոշել անձի՝ որևէ այլ  
երկրում փախստականի  
կարգավիճակ կամ ապաստանի  
իրավունք ստանալը: